

ՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔՐԵԱԿԱՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

ՌԱՖԻԿ ՍԱՆԺՐՈՍՅԱՆ

Լեզվաբանական գիտությունների հարացույցում տարրեր դարաշրջաններում տարրեր ենթագիտակարգերի շրջանակներում փորձեր են կատարվել բացատրելու լեզվի դերի կարևորությունը ոչ միայն անհատի, այլ նաև որոշակի լեզվով խոսող հանրույթի աշխարհընկալման և աշխարհկառուցման հարցում: Անհատի՝ որպես որոշակի հանրույթի անօտարելի տարրի հարաբերակցությունը արտաքին աշխարհի իրականության հետ բարդ է և բազմաբուժանդակ: Բարդ են նաև անհատի և հանրույթի կողմից ստեղծված ցանկալի /օրինական/ կամ անցանկալի /անօրինական/ աշխարհների միջև կապը և այդ աշխարհները ճանաչելու, այդ իրականությունների կանոններին հետևելու, անհատի արարքներն այդ աշխարհի /ան/ցանկալիության չափանիշներին վերագրելու գործնթացը: Վերագրման այս բարդ գործնթացը պայմանավորվում է լեզվի անվանողական գործառույթով: Լեզվի անվանողական գործառույթը սահմանափակվում է ոչ միայն մարդու համար օբյեկտիվ աշխարհի երևույթները անվանակույթով /ծառ, քար, ջուր/, այլ նաև արդեն օբյեկտիվ դարձած և դարձվող աշխարհի երևույթները ճանաչելով /մշակութային նորմ, իրավունք, հանցագործություն/, մինչդեռ ճանաչման գործնթացն անհնար է դառնում առանց անվանման: Իսկ իրավական դաշտը, որպես արդեն օբյեկտիվ դարձած աշխարհ, որտեղ կարելի է կամ չի կարելի կատարել այս կամ այն արարքը, կերտվում և շրջանակվում է լեզվի միջոցով: Լեզուն է այն միակ գործիքը, որը վերածում է իրավունքը օբյեկտիվ աշխարհի, լեզուն է նաև առարկայացնում իրավունքը և այդ իրավունքից բխող պարտականությունները և չափանիշները: Այսինքն՝ մարդու, ինչպես նաև հանրույթի, և իրավունքի միջև ընկած միակ տարածքն այն ցանցն է, որը կոչվում է լեզու:

Եթե դիտարկենք, թե ինչ է տեղի ունենում իրավական համատեքստում, ապա հնարավոր կյինի տեսնել առնվազն երեք հարթություն, որտեղ խաչվում են իրավունք և լեզու երևույթները: Լեզվի և իրավունքի խաչմերուկն առաջանում է, բայց չի սահմանափակվում, ինչպես արդեն նշեցինք, այն պահից, եթե որոշակի երևույթ բառայնացվում է, այսինքն՝ ստանում է իր լեզվական

տեսքը, ապա այն տարածվում է դեպի այդ որոշակի իրադարձությունը նկարագրելը՝ (ապա)կառուցելը, իսկ նկարագրելոց հետո՝ այն որոշակի իրավական, հանրային, մշակութային նորմերին վերագրելը՝ համաձայնեցնելը: Ուրեմն, իրական աշխարհում տեղի ունեցած յուրաքանչյուր իրադարձություն լեզվի միջոցով տեղայնացվում է որոշակի աստիճանակարգում՝ E→T→N, որտեղ E-ն այն իրադարձությունն է, որը տեղի է ունեցել իրական աշխարհում, T-ն այն տեքստն է կամ տեքստերը, որոնք այդ իրադարձությունը նկարագրում են դատարանում կամ այլ իրավական նշանակություն ունեցող փաստաթյուրում, իսկ N-ը այն իրավական նորմն է, որին վերագրվում է Ե իրադարձությունը: Ուշագրավ է այն, որ այս նկարագրության և վերագրման մակարդակներում կարևորվում է պատճառական կապերի վերհանման և հստակեցման խնդիրը: Եթե հայցվորը բողոք է ներկայացնում դատական ատյան՝ անդելով, որ օբյեկտիվ աշխարհում տեղի ունեցած անօրինական է կամ հակասում է հանրային, մշակութային կամ համընդիմանուր նորմերին, ապա պետք է հնարավորինս փաստարկված ներկայացնի իրադարձությունների հարաբերությունը՝ ցոյց տալով դրանց միջև առկա անքակտելի պատճառական կապը: Այս պատճառական կապը կարելի է տեսնել ոչ միայն տարբեր իրադարձությունների միջև տեքստային մակարդակում, այլ նաև մեկ բարի իմություն: Փաստորեն մեկ բառով կարելի է կապ ստեղծել որոշակի իրադարձության, նորմի և եղանակի միջև: Օրինակ՝ «սպանել» բայց հայերենում արտահայտում է ոչ միայն երկու գործող սուբյեկտների՝ սպանողի և սպանվածի առկայությունը, այլ նաև մի գործողություն, որը վերագրվում է իրավական (և ոչ միայն) նորմին և համարվում ապօրինի: Նշենք «սպանել», «սպանություն» բառ-իրադարձության հիմաստը և՝ քրեական օրենսգրքում, և՝ բացատրական բառարաններում: Համաձայն <<քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի¹

«Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիմավորությամբ կյանքից գրկելը՝ պարժելում է ազադագրկմամբ՝ ութից դասնիկին գրադադարի ժամկետում»:

Ինչպես երևում է, **սպանություն** բառային միավորը պարունակում է ոչ միայն կյանքից գրկելու հիմաստ, այլ նաև վերագրում է այդ երևույթը իրավական նորմին՝ սահմանելով, որ այն հակասում է դրան, ապօրինի է: Ետաքրքրական է, որ բառարանում «սպանությունը» բացատրվում է որպես ուղղակի որևէ մեկին կյանքից գրկելը¹, այնինչ սպանել բայն արդեն Աղայանի համընդգրկուն բառարանում բացատրվում է նախ որպես «որևէ միջոցով

¹ Հրայա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 1969:

մեկին կյանքից գրել, մեղոնել», ապա «մահ պատճառել, մահացնել»²: Փաստորեն, հայերենում սպանել բայն իր իմաստաբանական կառուցում պարունակում է միջոցի բաղադրիչ, որը, ենթադրաբար, պայմանավորում է բառիս դիտավորության արգումենտը ներկայիս կիրառության մեջ: Վերոնշյալն է թերևս գախս բացատրելու այն, որ հայերենում սպանել բայր, ի տարրերություն անգլերենի, կիրառվում է միայն բռնության և դիտավորության իմաստներն արտահայտելով՝ ստվեր գցելով ընկալելի «հանցանքը» կատարողի հնարավոր անմեղության, իրավիճակի պատահականության և անմեջունակության վրա, ինչպես նաև պայմանավորելով իրավունքի, իրավականության հանրային ընկալումները:

Սպանություն բառ-եզրը մեկն է մի քանի տասնյակ եզրերից, որոնք կիրառվում են քրեականության խոսությունում և ծևավորում հանրային վերաբերմունքը՝ կարծրացնելով և սահմանափակելով այն որոշակի երևույթի նկատմամբ մեկ հնարավոր մոտեցմամբ: Եթե հայերենի քրեականությունը մեկն է մի քանի տասնյակ արծարծվում որպես մեկին ապօրինաբար և դիտավորյալ կյանքից գրկելը, ապա անգլերենում այդ **սպանություն** երևույթը քրեականություն խոսությունում խստորշվում և ներկայացվում է մի շարք բառերով, ինչպիսին են օրինակ՝ homicide³, murder⁴, manslaughter⁵, killing⁶: Այս բառերը հայերենում ունեն մեկ համարժեք՝ սպանություն:

Չնայած նրան, որ անգլերենում, ի տարրերություն հայերենի, մարդուն կյանքից գրկելու իմաստն արտահայտելու համար կիրառվում են մի շարք բառեր, անգլերենում ևս սպանության երևույթը և այդ երևույթի իրավաքնումը (հետևաբար նաև բառայնացումը) կարող են տեղի ունենալ վերլուծական եղանակով: Այլ կերպ ասած՝ եթե homicide⁷ բառը, ըստ Էռիթյան, գրատ մարդասպանության երևույթն է և չեղոք է այն առումով, որ դեռ չի վերագրվել իրավական նորմին, չի բացառում դրա վերլուծական, այսինքն՝ այլ բառային միջոցների հետ կիրառումը սպանության մեկ այլ տեսակ նշանակելու համար՝ vehicu-

² Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, 1976:

³ <http://codes.lp.findlaw.com/uscode/18/I/51>, առ' 05.05.2014, 15:20:

⁴ <http://codes.lp.findlaw.com/uscode/18/I/51/111>, առ' 05.05.2014, 15:26:

⁵ <http://codes.lp.findlaw.com/uscode/18/I/51/112>, առ' 05.05.2014, 15:30:

⁶ <http://codes.lp.findlaw.com/uscode/18/I/51/1121>, առ' 05.05.2014, 15:32:

⁷ “Homicide is when one human being causes the death of another. Not all homicide is murder, as some killings are manslaughter, and some are lawful, such as when justified by an affirmative defense, like insanity or self-defense” (Legal Information Institute).

lar homicide, justifiable homicide, negligent homicide, accidental homicide, homicide per infortunium, felonious homicide, excusable homicide⁸: Նոյն էլ թերևս տեղի է ունենում murder եզրի պարագայում. այս բառի «սովորական», այսինքն՝ ոչ քրեահրավական կիրառության բառահասկացութային կադապարը ընդարձակվում է: Եթե ըստ բառարանի այն նշանակում է «մի մարդու ապօրինի կանխամտածված սպանությունը մեկ այլ մարդու կողմից»⁹, ապա քրեահրավական կիրառության դեպքում եզրի բառահմաստաբանական կառուցք ընդարձակվում է ընդհուպ¹⁰ մինչև գործողություն կատարողի հոգեւան վիճակը, տարիքը, մերսունակությունը, գործողության էքսայերենսերի, այսինքն՝ գործողությունը կրողի տարիքը, գործողության կատարման հանգամանքները, հիմքը, արդարացումը, օրինականությունը, բացահայտ կամ ենթադրյալ կանխամտածված վնասը, ինչպես նաև վնասը հասցնելուց հետո մահվան տեղի ունենալու ժամանակահատվածը: Այս մանրամասնություններով հանդերձ՝ ուշագրավ է այն, որ ժամանակակից անգերենում դեռ անհրաժեշտություն է առաջանում վերլուծական եղանակով ներկայացնելու լյանքից գրկելու այստեսակ իրադարձության բոլոր այլ հասրավիր ձևերը՝ second-degree murder /երկրորդ աստիճանի ծանր սպանություն/, assault with intent to murder /ծանր սպանության նպատակով հարձակում/, first-degree murder /առաջին աստիճանի ծանր սպանություն/, attempted murder /մահափորձ/, third-degree murder, premeditated murder /երրորդ աստիճանի ծանր սպանություն/:

Չնայած նրան, որ հայերենում մի շարք բառեր արտահայտում են անձին կյանքից գրկելու իմաստը՝ քրեահրավական խոսություն ընդգծված կիրառությամբ հանդես է գալիս միայն մեկը՝ սպանել: Ա. Սութիասյանի «Հայոց լեզվի

⁸ (The Law Dictionary)

⁹ Թարգմանությունն իմն է՝ 'The unlawful premeditated killing of one human being by another' (Oxford Dictionaries):

¹⁰ "The crime committed where a person of sound mind and discretion (that is, of sufficient age to form and execute a criminal design and not legally "insane") kills any human creature in being (excluding quick but unborn children) and in the peace of the state or nation (including all persons except the military forces of the public enemy in time of war or battle) without any warrant, justification, or excuse in law, with malice aforethought, express or implied, that is, with a deliberate purpose or a design or determination distinctly formed in the mind before the commission of the act, provided that death results from the injury inflicted within one year and a day after its infliction" (Legal Information Institute).

հիմանիշների բառարանում» «սպանել» բայի համար նշվում են հետևյալ օրինակները¹¹:

| | | | |
|--|---|---|---|
| «Մարդուն կյանքից գրկելու» իմաստ արտահայտող բառային միավոր հայերենում | Համապատասխան իրադարձությունը գոյականի տեսքով հայերենում | Համապատասխան իրադարձությունը գոյականի տեսքով անզերենում | Բայի անգլերեն համարժեքը |
| մահացնել | մահացում ¹² | killing | To deaden, to kill, to cause the death of |
| մեղնել | - | killing | To deaden, to kill, to cause the death of |
| խողխողել | խողխողում ¹³ | | to butcher, to stab (multiplicative) |
| գնդակահարել | գնդակահարություն | fusillade | to fusillade, to kill by firing squad |
| մորթել | մորթ | slaughter | to slaughter |
| կոտորել | կոտորած | extermination massacre | to exterminate, to massacre |
| սրածել | սրածություն | - | to put to the sword, to slash |
| ջարդել | ջարդ | | to slay |
| ոչնազնել | ոչնազում | annihilation | to annihilate |
| անէացնել | անէացում | annihilation | to annihilate |
| մահապատժել | մահապատիժ | execution | to execute |
| խաչել | խաչելություն | crucifixion | to crucify |

¹¹ Սուրիհայան Ա.Մ., Հայոց լեզվի հիմանիշների բառարան, Երևան, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1967:

¹² Աղյան Է.Բ., նշվ. աշխ.:

¹³ Խողխողելու գոյականացման հետևանքով (խողխողում) հայերենում կրավորականության ու պատճառականության իմաստները հանդես են գալիս միասին, չեն տարանջատվում գոյականի իմաստային կառուցում: Այլ կերպ ասած՝ «խողխողում» կարող է նշանակել և՝ խողխողել, և՝ խողխողվել:

¹⁴ Այս պարագայում գործ ունենք կրկնակի ստորոգման (double predication) հետ, եթե մի կողմից ուղղի խնդրի դիրքում հայտնված բառը մյուս կողմից գործողությունը կատարողն է:

| | | | |
|-----------------------|-------------------|----------------------------|---|
| խաչ հանել | - | execution on the cross | to fix on the cross |
| սպանդագործել | | | - |
| սատակել ¹⁴ | | extermination, destruction | to exterminate, to destroy |
| վախճանել | վախճան | termination | to terminate, |
| հրացանել | - | - | to shoot to death, to execute by shooting |
| գնդակել | - | - | - |
| հրացանահարել | հրացանահարություն | | to shoot to death, to execute by shooting |
| վերջացնել | վերջ | end, ending, termination | to end, to terminate |
| ալել | ալում | - | - |
| դադել | դադում | | ≈ to lash to death, to whip to death |
| զնգողել | զնգողում | - | - |

Վերոբերյալ աղյուսակը ոչ մի կերպ չի փորձում սպառել ո՞չ հայերենում, ո՞չ անգլերենում կյանքից զրկելու իմաստն արտահայտող բառանությունը: Մեր հետազոտական դիտակետից դուրս են նաև դարձվածային միավորները և փոխարերությունները: Բնականաբար, ցուցակում հայտնված բառերից շատերը և՛ հայերենում, և՛ անգլերենում պատկանում են ոճական տարրեր շերտերի, և այդ ոճական շերտավորվածությունը չի կարող չազդել այդ բառերի կիրառության հետագա ճակատագրի վրա: Այդուհանդերձ, մեր կողմից առաջարկված խնդրի համար այդ բառ-եզրերից որոշ մասի նորոգումը, վերահմաստավորումը կամ կիրառության թարմացումը կարող էին շահեկան լինել իրավունքի հանրային ընկալումների լեզվական կաղապարման համար:

Պատճառականության կարգի առկայացման բառակազմական առանձնահատկությունների տեսանկյունից հայերենը պարծենում է այսպես կոչված բազմապատկական և նաև սաստկական բայերի կարգով: Մրանք այն բայերն

¹⁴ Գույումճեան Մ.Կ., Ընդարձակ բառարան հայերէնէ անգլիերէն, Պէյրութ, տպարան «Ամդաս», 1970:

Են, որոնք կազմվում են -ելով վերջացող բայերից -ոտ-, -ատ-, -տ- և մի քանի այլ ոչ այդքան հաճախաբար ածանցներով և նշանակում են գործողության կրկնություն, սաստկություն, տարածականություն, կամ մի քանի առարկաների կատարած միանման գործողություն՝ մորթել-մորթովել, դաղել-դաղովել, ջարդել-ջարդովել։ Պատճառականության այս իմաստը հավելյալ սաստկություն կարող է ստանալ նաև արմատի կրկնությամբ՝ խողխողել, դաղդղել կամ այլ՝ ավելի հազվադեպ բազմապատկան իմաստ արտահայտող ածանցների միջոցով՝ -ոտ-, -ոդ-, -ատակ-, -որ-, օրինակ՝ զնզողել, դաղովել և այլն։

Հայերենում, ինչպես նաև անգլերենում և գերմաներենում, պատճառականության իմաստի շերտավիրմանը գալիս է նպաստելու դալ (անգլ. 'have/get, իսկ գերմ. lassen) բայց, օրինակ՝ «սպանել տալ» արտահայտության իմաստային կառուցում կարելի է զատորոշել կենսագրկության երկու պատճառիչներ (արգումենտներ)՝ (Ա ՊԱՏՃԱՌԵԼ, (Բ ՊԱՏՃԱՌԵԼ, (Գ ԴԱՐՆԱԼ ՄԱՀԱՑԱԾ))։ Ավելի խրթին է դառնում պրեդիկատարգումենտային կառուցը, երբ հետևանքային բայի փոխարեն գործածվում է, օրինակ, ձևի բայ. «մորթել տալ» արտահայտության պրեդիկատարգումենտային կառուցը այս դեպքում կունենա հետևյալ տեսքը՝ (Ա ՊԱՏՃԱՌԵԼ, (Բ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ, (Գ) & ՊԱՏՃԱՌԵԼ, (Ա ԴԱՐՆԱԼ ԱՄՓԼՈՒԽ))։ Այստեղ հստակեցվում են մեր կողմից նախկինում առաջադրված մակրո և միկրոպատճառականության գաղափարները։ Այլ կերպ ասած՝ վերոբերյալ կառուցներում X-ը մակրոպատճառիչն է, իսկ Y-ը՝ գործողության անմիջական պատճառիչը, որը կարելի է համարել միկրոպատճառիչ։

«Կենսագրկության» նկատմամբ հանրային ընկալումների նեղացման սաստկացումը նկատելի է դառնում, երբ դիտարկում ենք «սպան» բառարմատի բառակազմական տեսանկյունից արգասաբեր լինելը։ Անգլերենում հաճախ օգտագործվող *-cide*¹⁵ վերջածանցը ըստ երևոյթին թարգմանվում է հայերեն որպես *-սպան*՝ կրկին նորաստեղծ բառին հաղորդելով հոդվածի սկզբում նշված բոլոր արգումենտներն ու պրեդիկատները։ Օրինակ՝ *uxoricide*¹⁶ կնասպան բառը, որի հայերեն տարբերակը, ի տարբերություն անգլերենի, նշանակում է միայն եղելության ագենտը, այսինքն՝ կնոջը սպանող ամուսնուն։ Ենթադրաբար, օրինաչափության այս խախտումը պայմանավորված է նրա-

¹⁵ Գյոյականակերտ *-cide* վերջածանցի ծագումնաբանության համար տե՛ս <http://www.perseus.tufts.edu/hopper/morph?l=caedo&l=la>, առ' 22.07.2014, 12:50:

¹⁶ *-cide* վերջածանցը կազմված գյոյակաների ամբողջական ցանկի համար տե՛ս <http://www.thefreedictionary.com/killing>, առ' 22.07.2014, 12:55:

նով, որ «սպան» արմատը անկախ կիրառություն չունի հայերենում և իր գոյականական տեսքը ստանում է միայն գոյականակերտ -ություն վերջածանցի օգնությամբ: Նմանատիպ գործառություն ունի նաև -cide-ը անգլերենում. այն կատարում է միայն բառակազմական գործառույթ և, չնայած իր լիիմաստ բառական ծագմանը (լատ. *cideere-սպանել*), օգտագործվում է միայն որպես «սպանություն», «անէացում», «ոչնչացում» իմաստները կրող գոյականակերտ վերջածանց: Այս առումով հետաքրքրական է, որ անգլերենում -cide-ով կազմված գոյականները տարբեր վարդագիծ են ցուցաբերում առ գոյականի նշանակած իրադրայնությունը: Այլ կերպ ասած՝ -cide-ով կազմված գոյականները կարող են ցույց տալ այն պատճառիշը, որը պատասխանատվություն է կրում իրադրադության ի հայտ գալու համար՝ *pesticide-ժանրասպան*, *insecticide* միջադրասպան, *microbicide-մանրէսպան*: Բայց և այնպես, նոյն բառակազմական սկզբունքներով կերտված գոյականներից շատերն ել ցույց են տալիս այն իրադրադությունը, որն արտահայտվում է գոյականով, այսինքն՝ ագենտի կամ պատճառիշի առկայությունն ընդգծված չէ և, առավել ևս, չի գերակայում բառահասկացութային ամբողջ կառույցի նկատմամբ: Այսեսակ գոյականների լավ օրինակներ կարող են լինել ***genocide -ցեղասպանություն***, ***vaticide* -մարգարեասպանություն**, ***avicide* -թռչնասպանություն**:

Հաշվի առնելով կենսագրկության իմաստ արտահայտող բառային միավորների բանակական և գործառնական առանձնահատկություններն անգլերենում և հայերենում՝ կարող ենք ենթադրել, որ իրավունքի, հանցանքի կամ քրեական ոլորտի մի շարք այլ երևույթների նկատմամբ հանրային ընկալումները կամ վերաբերունքը արտարկվում են լեբակական միավորի բառահասկացութային կաղապարի վրա, կամ, վիճարկելիորեն, պայմանավորում այդ ընկալումները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում փորձ է արվում վեր հանել պատճառականության կարգի և քրեականության հանրային ընկալումների միջև կապը: Մասնավորապես, ըննության են արժանացել «կենսագրկության» իմաստ արտահայտող բառային միավորները անգլերենում և հայերենում: «Սպանել» իմաստն արտահայտող միավորների բառահասկացութային կառույցում հանդես եկող արգումենտներն ու պրեդիկատները երևան են թերում լեզվի անվանողական գործառույթի դերը քրեականության նկատմամբ հանրային ընկալումների ձևակիրման հարցում:

Բանալի բառեր – իրավունք, հանցանք, պազճառականություն, սպանություն, սպանել իմաստ արդահայրող բայեր:

КАУЗАТИВНОСТЬ И ОБЩЕСТВЕННОЕ ВОСПРИЯТИЕ КРИМИНАЛЬНО-ПРАВОВОГО ДИСКУРСА

РАФИК САНТРОСЯН

В данной статье предпринята попытка выявить связь между каузативностью и восприятием обществом понятия “право”. Особое внимание уделяется лексическим единицам, выражающим “ лишение жизни” в английском и армянском языках. Аргументы и предикаты в рамках лексико-концептуальной структуры (LCS) глаголов со значением лишения жизни позволяют эксплицировать роль номинативной функции языка в формировании общественного восприятия криминально-правового дискурса.

Ключевые слова – закон, преступность, каузативность, убийство, глаголы лишения жизни.

YSLU DEPARTMENT OF ENGLISH PHONETICS AND GRAMMAR CAUSALITY AND PUBLIC PERCEPTION OF THE LAW

RAFIK SANTROSYAN

This paper tries to bring out the link between the scope of the causality factor and public perception of the criminal law. Especially, the lexical units conveying the notion of “deprivation of life” expressions in both English and Armenian languages are thoroughly investigated. The arguments and predicates within the Lexical Conceptual Structure (LCS) of the verbs ‘to kill’ come to explicate the signification of the role and function that ‘designating names in a language’ play in shaping public awareness towards criminal laws.

Key words – law, crime, causality, homicide, kill-verbs.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Jackendoff, R. (1976). *Semantics and Cognition*. MA: MIT Press.
2. Kennedy, C., & Levin, B. (2008). *Measure of Change: the Adjectival Core of Degree Achievements. Adjectives and Adverbs: Syntax, Semantics and Discourse*. (L. McNally, & C. Kennedy, Eds.) Oxford, UK: Oxford University Press.
3. Legal Information Institute. (n.d.). Retrieved May 13, 2014, from Cornell University Law School Website: <http://www.law.cornell.edu/wex/homicide>
4. Oxford Dictionaries. (n.d.). Retrieved May 13, 2014, from <http://www.oxforddictionaries.com/definition/english/murder?q=murder>
5. The Law Dictionary. (n.d.). Retrieved May 13, 2014, from <http://thelawdictionary.org/homicide/>
6. Աղյան Է. Բ. (1976). Արդի հայերենի բացալրական բառարան. Երևան: «Հայաստան» հրատարակչություն:
7. Աղյան Է. Բ. (1976). Արդի հայերենի բացալրական բառարան. Երևան: «Հայաստան» հրատարակչություն:
8. Գոյումճեան Մ. Կ. (1970). Ընդարձակ բառարան հայերէնէ անգիերէն. Պէյրութ: Տպարան «Ալլաս»:
9. Հրազյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (1969). Ժամանակակից հայոց լեզվի բացալրական բառարան. Երևան: Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն:
10. Սորիհասյան Ա. Մ. (1967). Հայոց լեզվի հոմանիշների բառարան. Երևան: Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն: